Դրությունը յուսահատական էր։ Մայիսի վերջերին Երևանի հացաբաժինը իջեցուց մէկ քառորդ ֆունտի, իսկ գաւառի ժողովուրդը արածում էր դաշտերում։ Սով Արքայի ուրուականը սաւառնում էր Հայաստանի դլխին։

Կառավարությունը նախատեսնում էր այդ վտանգը և դերագոյն ճիգ թափում առաջն առնելու։ Սակայն, նրա բոլոր դիմումներն ու թախանձանքները արձագանդ չդտան ոչ մի կողմից։ Անդլիացիք միայն յունուարին Կարսից Ալեքսանդրապոլ բերին 6 դնացք ցորեն և ալիւր և մի քանի վագոն էլ՝ Շարուրից։ Աննչան քանակությամբ ալիւր եկաւ և Թիֆլիսից և այնուհետև մինչև ապրիլի վերջերը Հայաստան դրսից մթերք չմտաւ. ապր. 28-ին խնամատարության նախարարությունը ստացաւ 15 վագոն ալիւր։

Յունս. 22 նիստին, վարչապետ Յ. Քաջադնունին բերեց հետևեալ առաջարկը. «Երկրին սպառնացող սովի առաջն առնելու համար անհրաժեշտ է դիմում անել դաշնակից պետություններին, մասնաւորապէս Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանդներին, օտար չուկաներից (առանձնապէս Ամերիկայից) Հայաստան խոշոր քանակությամբ հաց ներմուծելու համար։ Սպառնացող աղէտի ծաւալը պահանջում է, որ այս դիմումը անի Հայաստանի Խորհրդի և կառավարության յանձնարարությամբ անձամբ ինքը՝ վարչապետը, իբրև երկրի ամենաբարձր պաշտօնեան՝ ունենալով ուղեկիցներ պարենաւորման նախարարին և ելևմտական նախարարության կողմից մի ձեռնհաս խորհրդատու։ Բացի հացի խնդրից, նպատակայարմար և կարևոր է յանձնարարել սոյն անձնաւորություններին ա) համաձայնության դալ պետությունների կամ մեծ առևտրական տների հետ ներմուծելու Հայաստան երկրին պակասող առաջին անհրաժեշտության ապրանքներ և բ) հնար եղած դէպքում բանակցություններ վարել և պարզել, թէ ինչ պայմաններով Հայաստանի Հանրապետությունը կարող կը լինէր դրամական փոխարինություն անել արտասահմանում»։

Կառավարությունն ընդունեց առաջարկի կարևորությունն ու նպատակայարմարությունը և յանձնարարեց վարչապետին կազմել զեկուցում, նախահաշիւ և օրինագիծ Հայաստանի Խորհրդին ներկայացնելու համար։

Յունս. 27-ին վարչապետը ներկայացրեց զեկուցումը, նախահաշիւն ու օրինագիծը, որը ընդունեց և շտապ կարգով մտցուց Հայաստանի Խորհուրդ։ Այս վերջինն էլ, փետր. 4-ին, որոշեց. «Յանձնարարել վարչապետին ուղևորուել Եւրոպա և Ամերիկա, դիմել Հայաստանի Խորհրդի անունից համաձայնության պետությունների և Հիւս. Ամեր. Միաց. Նահանդների կառավարություններին և խնդրել նրանց օգնությունը՝ ներմուծելու երկիր Հայաստանին պակասող պարէնը և առաջին անհրաժեշտության ուրիշ ապրանքներ։ Ուղևորության ծախսերը ծածկելու համար բաց անել վարչապետին 550,000 ռուբլու վարկ»։

Փետր. 15-ին վարչապետի պաշտօնակատար նշանակուեց Ա. Խատիսեանը, իսկ Յ. Քաջադնունին մեկնեց Թիֆլիս։ Սակայն, անդլիական հրամանատարությունը երկար ժամանակ արտասահման անցնելու արտօնություն չտուեց, այնպէս որ Քաջադնունին ստիպուած եղաւ վերադառնալ Երևան, ապր. 2-ին նորից ստանձնեց վարչապետի պաշտօնը և միայն ապր. 16-ին կարողացաւ